Հաստատում եմ»

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան»

հիմնադրամի ռեկտոր,

տեխն.գ.դ., պրոֆեսոր _____ Ռ. Ռ. Սահակյան

«28» 11 _____ 2023 թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Քրիստինա Մելսի Թորգոմյանի «Անգլերենի համակցված ուսուցման մեթոդական համակարգը ոչ լեզվական բուհում» խորագրով ԺԳ.00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (անգլերեն լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Քրիստինե Մելսի Թորգոմյանի «Անգլերենի համակցված ուսուցման մեթոդական համակարգը ոչ լեզվական բուհում» թեմայով ատենախոսությունը և սեղմագիրը քննարկվել են Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի «Մանկավարժության և հոգեբանության» և «Օտար լեզուների և գրականության» ամբիոնների համատեղ նիստում (Արձ. թիվ 10, կայացած՝ 27.11.2023թ.):

Մասնակցում էին «Մանկավարժության և հոգեբանության» ամբիոնի մ.գ.դ., պրոֆեսոր Պ. Գևորգյանը, մ.գ.թ., դոցենտներ Լ. Բաղդասարյանը, Ս. Բեժանյանը, Լ. Հարոյանը, Ա. Հարությունյանը, ասիստենտներ՝ մ.գ.թ. Ն. Ներկարարյանը, Լ. Մարուքյանը, հ. գ. թ. դոցենտներ՝ Ն. Կոստանդյանը, Վ. Միրզոյանը, Մ. Մազմանյանը, Հ. Ավագիմյանը, դասախոս Ա. Խաչատրյանը:

«Օտար լեզուների և գրականության» ամբիոնի բ.գ.թ., դոցենտներ Թ. Թադևոսյանը, Կ. Առուստամյանը, Ն. Ջաղինյանը, բ.գ.թ., ասիստենտներ Ա. Պապոյանը, Ժ. Ալոյանը, Ա. Սիմոնյանը, մ.գ.թ. Գ. Հովհաննիսյանը, դասախոսներ Ս. Բարսեղյանը, Ն. Մարիկյանը, Գ. Մատինյանը, Ն. Ղումաշյանը, Ն. Սիրունյանը:

Հայտնի է, որ օտար լեզուների ուսուցման գործընթացն էականորեն տարբերվում է ոչ լեզվական և լեզվական բուհերում՝ կախված նպատակից, բովանդակությունից և կիրառվող մեթոդներից:

Մասնագիտական անգլերենի ուսուցումն ունի իր առանձնահատկությունները, բառապաշարի կիրառման դժվարությունները, եզրույթների բազմիմաստության և դրանց արդյունավետ կերպով յուրացման ու մտապահման խնդիրները:

Ոչ լեզվական բուհերում տարբեր ոլորտների գիտակ ու մրցունակ մասնագետներ պատրաստելու համար նպատակ է դրվում ոչ միայն ուսուցանելու ընդհանուր լեզվական գիտելիքներ, կարողություններ և հմտություններ, այլև ապահովելու այնպիսի մակարդակ, որը հնարավորություն կստեղծի իրականացնելու գրավոր և բանավոր հաղորդակցում նեղ մասնագիտական ոլորտում:

Այնուամենայնիվ, ոչ լեզվական բուհերում օտար լեզուների դասավանդմանը հատկացվող բավականին սահմանափակ ժամաքանակի պարագայում այս ամենի իրականացումը դառնում է բարդ և պահանջում նոր ու այլընտրանքային մոտեցումներ, որոնցից է տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը:

Սակայն տեխնոլոգիաների արագ աճն այս տեսանկյունից բերում է և՛ նոր խնդիրներ, և՛ մարտահրավերներ: Հետևաբար օտար լեզվի ուսուցման գործընթացը հարկավոր է կազմակերպել այնպես, որ հնարավոր լինի ոչ միայն դիմակայել վերջիններիս կիրառման ժամանակ առաջացող դժվարություններին, այլ նաև ժամանակակից տեխնոլոգիաները ծառայեցնել լեզվի ուսուցման որակի բարձրացմանը:

Այսպիսով՝ ատենախոսի վերոնշյալ վերնագրով աշխատանքի թեմայի արդիականությունը կարելի է հիմնավորված համարել՝ կարևորելով նրա տեսական և գործնական նշանակությունը:

Հետազոտության նպատակն է բարձրացնել և բարելավել անգլերենի ուսուցման մակարդակը՝ առդեմ ուսուցումը համադրելով համակցված ուսուցմանը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և թվով 25 հավելվածից:

Աշխատանքի առաջին գլխում, որը վերնագրված է «Անգլերենի դասավանդման մեթոդիկայի առանձնահատկությունները, առավելություններն ու թերությունները»,

անդրադարձ է կատարվում անգլերենի դասավանդման ավանդական և ժամանակակից մեթոդներին:

Այս գլխում հատկանշական են հատկապես համակցված ուսուցման մեթոդին առնչվող ուսումնասիրությունները, այդ մեթոդով առաջնորդվողների կողմից իրականացված փորձերի արդյունքները, և, մասնավորապես, հեղինակի կողմից ներկայացվող համակցված ուսուցման առաջարկվող սահմանումը:

Աշխատանքի երկրորդ գլխում՝ վերնագրված «Անգլերենի համակցված ուսուցման մեթոդը՝ ուսումնական գործընթացի բարելավման պայման», ուսումնասիրվել են տարբեր հարթակների (մասնավորապես MOODLE, Blackboard և այլն) ընձեռած հնարավորությունները, առավելությունները և թերությունները: Այս գլխում կարևորվել է նաև օտար լեզվի դասավանդման ընթացքում ստեղծարարության դերն ու նշանակությունը:

Ատենախոսության երրորդ գլուխը, որը վերնագրված է «Համակցված ուսուցմամբ անգլերենի դասավանդման գործընթացը և առցանց հարթակների օգտագործման հնարավորությունները», նախ առաջարկում է դասավանդող անձնակազմի վերապատրաստում՝ համակցված ուսուցումը նպատակին առավելագույնս ծառայեցնելու համար՝ ապահովելով անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ, ապա մանրամասն կերպով ներկայացնում է փորձարարական ուսուցման արդյունքները, որոնք իրականացվել են մի քանի փուլերով՝ մի շարք վերլուծական գործիքների կիրառմամբ:

Աշխատանքի այս գլխում ուսումնասիրվել և վերլուծվել է նաև «լեզվի ուսումնառության ընթացքում պլատոյի էֆեկտ» երևույթը և առաջարկվել են այն հաղթահարելու մի շարք մոտեցումներ՝ մշակելով հետաքրքրության խթանման ժամանակակից մոդել:

Վերլուծելով Ք. Թորգոմյանի ատենախոսական աշխատանքը՝ հարկ ենք համարում նշել հետազոտության արժեքավոր կողմերը.

- Հեղինակի կողմից կատարվել է հիմնահարցի տեսական հիմքերի խորը վերլուծություն, ուսումնասիրվել են օտար լեզվի դասավանդման մեթոդները՝ ընդգծելով վերջիններիս ընձեռած հնարավորությունները:
- Փորձարարական աշխատանքի արդյունքները հիմնավորված են, աշխատանքը՝ համակարգված:

• Կատարված ուսումնասիրության արդյունքում ներկայացվել է համակցված ուսուցման նոր սահմանում:

• Ատենախոսությանը կից www.nearpod.com համացանցային հարթակում մշակվել են առցանց դասեր, մտքի քարտեզներ, հուշաքարտեր և այլն:

Արժևորելով ատենախոսի կողմից կատարված գիտական աշխատանքը՝ հարկ ենք համարում ներկայացնել մի քանի նկատառումներ և առաջարկներ.

• Հետազոտման խնդիրներից 1-ինը և 4-րդը վերաձևակերպման կարիք ունեն:

• Առաջին գլուխը վերնագրված է «Անգլերենի դասավանդման մեթոդիկայի առանձնահատկությունները, առավելություններն ու թերությունները»: Մեր կարծիքով ճիշտ կլիներ այն ձևակերպել «Անգլերենի դասավանդման մեթոդների առավելություններն ու թերությունները», քանի որ գլխում չի խոսվում անգլերենի դասավանդման մեթոդիկայի առանձնահատկությունների մասին, ավելին՝ վերլուծվել են անգլերենի դասավանդման ոչ թե մեթոդիկան, այլ այնտեղ տեղ գտած մեթոդների և մոտեցումների առավելություններն ու թերությունները:

• Աշխատանքը կշահեր, եթե առաջին գլխում աղյուսակի կամ այլ պատկերների միջոցով ներկայացվեր ավանդական և ժամանակակից մեթոդների առավելություններն ու թերությունները, որոնք ցայտուն կդարձնեին ատենախոսի կողմից առաջարկվող մոտեցումների արդյունավետությունը:

• Եզրակացություններից 3-րդը՝ վերաձևակերպման, իսկ 6-րդը վերափոխման կարիք ունեն:

• Աշխատանքում առկա են որոշ տպագրական վրիպակներ:

Վերոնշյալ նկատառումները չեն ազդում ատենախոսության արժեքի վրա:

Աշխատանքը կատարված է գիտական պատշաճ մակարդակով և համապատասխանում է ատենախոսությանը ներկայացվող պահանջներին:

Եզրակացություն

Հետազոտության թեմայի արդիականությունը, տեսական և գործնական նշանակությունը, գիտական նորույթը, ձեռք բերված արդյունքների հիմնավորվածությունը թույլ են տալիս եզրակացնել, որ Քրիստինա Մելսի Թորգոմյանի «Անգլերենի համակցված ուսուցման մեթոդական համակարգը ոչ

լեզվական բուհում» թեմայով ատենախոսությունը համակարգված ինքնուրույն, ավարտուն աշխատանք է, համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԺԳ.00.02. «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (անգլերեն լեզու) մասնագիտական թվանշին:

Հետևաբար, ատենախոսին կարելի է շնորհել հայցվող մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Մանկավարժության և հոգեբանության
ամբիոնի վարիչ՝ / մ.գ.թ., դոցենտ Լ.Գ. Բաղդասարյան

Օտար լեզուների և գրականության
ամբիոնի վարիչ՝ / բ.գ.թ, դոցենտ Թ.Վ. Թադևոսյան

Լ. Բաղդասարյանի և Թ. Թադևոսյանի ստորագրությունները հաստատում եմ

ԿՊՀՀ-ի գիտքարտուղար,
մ. գ. թ, դոցենտ _____ Ս.Ս. Բեժանյան